

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ի Ր Ա Վ Ա Բ Ա Ն Ն Ե Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (64)
2014 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Խ մ բ ա գ ռ ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.թ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.թ.

Արմեն Հայկյանց - ի.գ.թ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.թ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝ www.orenq.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: ysu@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման քիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.05.2014

Հանձնված է տպագրության

3.07.2014

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (64)
2014 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1, юридический
факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: www.orenq.am

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.05.2014
Подписано к печати 3.07.2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գազիկ Դագինյան, Տաթևիկ Սուջյան

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ.....5

Սամվել Դիրանդյան

ՉԵՐԲԱԿԱՆԱԿԱԾ ԱՆՋԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԶԱՓ ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 16

Հրայր Դուկասյան, Անահիտ Հարությունյան

ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳԵԼՔԸ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԼՈՒՅՄԻ
ՆԵՐՔՈ.....26

Դավիթ Ավետիսյան

ՅԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ՆԱԽԱԳԾԻ35

Վահե Ենգիբադյան

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ45

Արթուր Չախոյան

ՀԱՏՈՒԿ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....53

Դավիթ Մելքոնյան

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ՆՈՐ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԿՇԻՈՆՆԵՐԸ62

Դավիթ Խաչատրյան

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹ. ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ,
ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ68

Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ89

Գևորգ Բաղդասարյան

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ.....99

Արժեքն Գովհաննիսյան

Նոր երեւան եկած Յանգաւանքներով բացառիկ ՎերանաՅման Գիտքերի՝
ԴԱՏԱՎՈՐՈՎ ԶԱՍՏԱՏՎԱԾ ԶԼԻՆԵԼՈՒ ԴԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ....110

Նեյի Աղաբաբյան

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԶԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱԿՈՐՄԱՆ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ.....119

Սարգսյան Հայկ

ԴԱՏԱՆԱԶԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ.....130

ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳԵԼՔԸ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

Հրայր Ղուկասյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
ամբիոնի դոցենտ, ՀՀ քրեական դատավարության նոր
օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի ղեկավար*

Անահիտ Հարությունյան

*ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նպատակներից է անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը (Նախագծի 2-րդ հոդված): Այս նպատակի նվաճման հիմնական միջոցներն իրենց ամրագրումն են ստացել Նախագծի մի շարք սկզբունքներում: Այսպես.

✓ Վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը (Նախագծի 15 հոդվածի 1-ին մաս),

✓ Քրեական վարույթն իրականացնող մարմինների իրավասությունը, նրանց կողմից վարույթի իրականացման կարգը չեն կարող կամայականորեն փոփոխվել առանձին դեպքի կամ անձի կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ ժամանակահատվածով (Նախագծի 16 հոդվածի 3-րդ մաս),

✓ Նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում (Նախագծի 24 հոդվածի 1-ին մաս):

Սակայն մեր կարծիքով վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումն ապահովող առավել կարևոր ելակետային դրույթներից մեկն իր արտացոլումն է ստացել Նախագծի 29 հոդվածում (ոչ իրավաչափ վարքագծի արգելքը, համաձայն որի՝ վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Արգելվում է իրավունքների չարաշահումը, որ վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին (Նախագծի 29 հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

Սկզբունքի մակարդակով նման պարտականության սահմանումը նորույթ է հայրենական քրեական դատավարությունում: Այն հստակ արտահայտում է քրեական վարույթի ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանություն ապահովելու կամքը, ինչպես նաև առաջին անգամ ընդգծված ցույց է տալիս, ի շահ արդարադատության կամ հանրության, առանձին անձանց դատավարական իրավունքների սահմանափակման հնարավորությունը:

Անշուշտ, այս սկզբունքի բովանդակությունը վերը նշված ձևակերպմամբ չի սպառնում, և այն բացահայտվում ու մանրամասնվում է Նախագծի բազմաթիվ այլ դրույթներ

րում: Միաժամանակ ակնկալվում է, որ դրա առանձին հատկանիշներ կպարզաբանվեն կամ կհստակեցվեն ասպագայում՝ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման և զարգացման ընթացքում: Այդուհանդերձ, արդեն այսօր ակնհայտ է, որ այս նոր սկզբունքով սահմանված դրույթները վարույթի տարբեր մասնակիցների համար տարբեր դրսևորումներ են ունենալու: Մասնավորապես, դրանք առանձնահատուկ են լինելու պաշտպանի գործունեության համար, քանզի նրա վարքագիծը կարգավորող դատավարական կանոնները հաճախ հատվում են մասնագիտական էթիկայի պահանջների հետ:

Քրեական վարույթը յուրօրինակ բեմահարթակ է, որտեղ հանդես են գալիս տարբեր շահեր, կարգավիճակ և լիազորություններ ունեցող անձինք: Մասնավոր անձի շահեր ներկայացնող և քրեական պաշտպանություն իրականացնող փաստաբանը նրանցից մեկն է: Ակնհայտ է, որ վերջինիս վերապահված լիազորությունները պետք է իրացվեն հանուն որոշակի արժեքների պաշտպանության:

Ի՞նչ ասել է իրավունքներից օգտվել և պարտականությունները կատարել բարեխղճորեն՝ մեղադրյալի իրավաչափ շահերը ներկայացնող անձի դիտանկյունից: Հայերեն բացատրական բառարանում *բարեխղճ* բառը մեկնաբանվում ու բացատրվում է որպես պարտականություններն ազնվորեն կատարող, պարտաճանաչ, արդարամիտ, ազնիվ, խղճով, պատվով, ուշադրությամբ կատարված¹: Ստացվում է, որ այս հոդվածի բովանդակությունը պաշտպանին թելադրում է ընտրել ոչ թե դեպի ծրագրված նպատակները տանող առավել հակիրճ, և թող ոչ միշտ օրենքի տառին համապատասխանող ուղին, այլ պատվով անցնել արդարադատության երբեմն անգամ փշոտ ճանապարհը: Հետևաբար, ոչ իրավաչափ վարքագծի արգելքը, վարույթի մասնակիցներին տարբեր պահանջներով ներկայանալով, քրեական պաշտպանության ոլորտում ձեռք է բերում որոշակի առանձնահատկություններ:

Թեև ՀՀ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքում» բարեխղճությունը, որպես առանձին սկզբունք, ամրագրված չէ, այդուհանդերձ այն փաստաբանական էթիկայի անկյունաքարային գաղափարներից է, որն առավելապես բնութագրում է փաստաբանական գործունեության «արտաքին կողմը»: Մասնագիտական գրականության մեջ կարծիքներ են հնչել, որոնցով առաջարկվել է այն բացառել պաշտպանի գործունեության սկզբունքներից², ինչպես նաև նշվել է, որ պաշտպանի առաջնային և ամենակարևոր հատկանիշները պետք է լինեն անկողմնակալությունն ու ճշմարտախոսությունը³:

Կարծում ենք, որ այս հեղինակները «բարեխղճություն» եզրույթը դիտարկում են միայն փիլիսոփայական տեսանկյունից: Բնականաբար, պաշտպանի գործունեության առանձնահատկությունն այնպիսին է, որ այս սկզբունքը մի փոքր այլ կադապարներ է ստանալու և կախվածության մեջ է ընկնելու մասնագիտական պարտքի ու պաշտպանյալին չվնասելու սկզբունքներից, բայց այն պաշտպանի գործունեությունից ամբողջությամբ բացառելը միանշանակ անընդունելի է: Ասվածի վառ օրինակ են գործնական այն իրավիճակները, երբ պաշտպանյալի անմեղության հիմնավորումները ստանում են այլ անձանց մեղադրելու երանգներ:

Նման դեպքերում, պաշտպանության բնույթից և գործառույթներից ելնելով, ամենացանկալի տարբերակն այն է, երբ պաշտպանն առանց «հարձակվողական գործողությունների», իր տրամադրության տակ եղած ապացուցողական ինֆորմացիայով կա-

¹ Տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 174:

² Տե՛ս Salgado D. C., Nandayapa C. F. Temas de derecho procesal de México y España. Mexico, Madrid, 2005, էջ 25:

³ Տե՛ս Harris. J. Ch. A monograph on legal ethics. London, 1907, էջ 35, Williams H. W. Legal ethics and suggestions for young counsel. Pennsylvania, 1996, էջ 71:

րողանա հերքել իր վստահորդին ներկայացված անհիմն մեղադրանքները: Կարծում ենք, որ նույնիսկ մի քանի մեղադրյալների ու նրանց շահերի միջև հակասությունների առկայության դեպքում հնարավոր է մշակել և իրականացնել պաշտպանության նման գիծ (թեև դա դյուրին խնդիր չէ): Սակայն քանի դեռ պաշտպանը չունի նման ապացույցներ, իսկ մյուս մեղադրյալներն ու նրանց պաշտպաններն անցնում են մեղադրանքի կողմն ու փորձում «հարվածել թիկունքից», բարեխղճության տեսանկյունից արդարացված կլինի, եթե պաշտպանը հարձակմանը պատասխանի հարձակմամբ:

Պրակտիկայում պատահում են նաև իրավիճակներ, երբ մեղադրյալներից մեկն իր կատարածը բարդում է մյուսի վրա և վերջինիս պաշտպանությունն անխուսափելիորեն հանգեցնում է մյուսի վիճակի վատթարացմանը: Կարծում ենք, որ նման մարտավարությունը լիովին տեղավորվում է բարեխղճության շրջանակներում, քանի որ հակառակ դեպքում պաշտպանը չի կատարի թե իր մասնագիտական պարտքը և թե օրենսդրական պարտականությունը ու իր պաշտպանյալի համար կվերածվի երևակայական պաշտպանի: Հետևաբար, պաշտպանն իրավունք ունի պաշտպանությունն իրականացնել մյուս մեղադրյալներին մեղադրելու միջոցով, բացառապես եթե.

1. մյուս մեղադրյալները կամ նրանց պաշտպանները հանցանքի կատարման մեջ հիմնավորված կամ անհիմն մեղադրում են իր վստահորդին,
2. այդ մեղադրանքը հերքելու այլ հնարավորություն օբյեկտիվորեն չի եղել, և պաշտպանի կողմից նման քայլին հարկադրված դիմելն ակնհայտ է,
3. եթե պաշտպանն առավել քան հաստատապես համոզված է մեղադրական փաստերի հավաստիության մեջ,
4. եթե պաշտպանը հաստատապես վստահ է, որ իր պաշտպանյալի վիճակը կտրուկ կբարելավվի:

Սակայն այս իրավիճակում էլ պաշտպանի վարքագիծը պետք է լինի չափազանց զուսպ և կռռեկտ, իսկ այլոց մեղադրելն էլ չպետք է վերածվի ինքնանպատակի: Մյուս բոլոր իրավիճակներում պաշտպանի կողմից մեղադրական գործառույթի իրականացումը ոչ միայն կհակասի բարեխղճություն սկզբունքի էությանը, այլև կիմաստագրկի պաշտպանության ինստիտուտի գոյությունն ու նշանակությունը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե ինչպես են հարաբերակցվում բարեխղճության սկզբունքն ու նախնական քննության գաղտնիության պահանջը: Գործող քրեական դատավարության օրենսգրքի 201 հոդվածի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Անհրաժեշտության դեպքում քննիչը, հետաքննության մարմինը (...) պաշտպանին (...) գրավոր նախազգուշացնում են նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին:

Նշված դրույթի տարազգի մեկնաբանությունից հետևում է, որ այս պահանջը հավասարապես տարածվում է նաև պաշտպան-պաշտպանյալ հարաբերությունների վրա, թեև տեսական գրականության մեջ իրավացիորեն տեսակետ է արտահայտվել, որ պաշտպան-վստահորդ հարաբերությունների նկատմամբ այս պահանջը տարածելի չէ՝ հաշվի առնելով նրանց հարաբերությունների բնույթն ու այն հանգամանքը, որ, միևնույնն է, մեղադրյալն ի վերջո ծանոթանալու է այդ տվյալներին⁴:

Այս հարցի կապակցությամբ դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների

⁴ Ст' u Бούков А. Д. Этика профессиональной защиты по уголовным делам. Москва, 1978, էջ 65:

եվրոպական դատարանը (այսուհետ՝ ԵԴ): Այսպես՝ Ջասպերսն ընդդեմ Բելգիայի գործով Կոմիտեն նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հնարավորությունները, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր մեղադրյալ, ներառում են նաև ողջ քննության ընթացքի արդյունքներին ծանոթանալու իրավունքը՝ պաշտպանությանը նախապատրաստվելու կոնտեքստում: Ավելին՝ Կոմիտեն արդեն բազմիցս նշել է, որ թեև Կոնվենցիան քննչական մարմինների նյութերի նկատմամբ մատչելիության երաշխիքներ ուղղակիորեն չի նախատեսում, այդպիսի իրավունք կարող է ենթադրվել 6 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի լույսի ներքո:

Կոմիտեն հաստատում է, որ 6 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը նախատեսում է մեղադրյալի իրավունքն իր տրամադրության տակ ունենալ իրավասու մարմինների կողմից հավաքված բոլոր անհրաժեշտ նյութերը՝ նպատակ ունենալով վիճարկել մեղադրանքը կամ հասնել ավելի մեղմ պատիժ նշանակելուն⁵: Միաժամանակ Դատարանը գտել է, որ պետությունը կարող է պաշտպանության կողմի համար սահմանափակել քննության նյութերի մատչելիությունը՝ արդարադատության պատշաճ իրականացման նպատակով՝ անգամ այն պարագայում, երբ ապացույցները մեղադրյալի համար կարևոր էին⁶: Սակայն պաշտպանության իրավունքի կապակցությամբ Դատարանի դիրքորոշումը հետևյալն է. Դատարանը ելնում է պաշտպանության միասնական իրավունքից, այսինքն՝ պաշտպանն ու մեղադրյալը դիտարկվում են որպես միասնականություն, և եթե 6 հոդվածով նախատեսված իրավունքներն ապահովվում են նրանցից միայն մեկի նկատմամբ, Դատարանը պաշտպանության իրավունքի խախտում չի արձանագրում:

Հետևաբար, Դատարանի դիրքորոշմամբ միայն պաշտպանի կողմից նախնական քննության նյութերին ծանոթանալը բավարար է պաշտպանության իրավունքի և Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների պահպանման տեսանկյունից:

Այս հարցի կապակցությամբ բոլորովին այլ է ԱՄՆ գերագույն դատարանի դիրքորոշումը (նկատենք, որ ԱՄՆ-ում, որպես կանոն, պաշտպանը գործի նյութերին չի ծանոթանում նաև նախաքննության ավարտից հետո)⁷: Թրամմելն ընդդեմ ԱՄՆ-ի գործով գերագույն դատարանը սահմանել է, որ անիմաստ է պաշտպանյալին զրկել որոշ տեղեկություններ ստանալու հնարավորությունից. դա ուղղակիորեն բխում է պաշտպանության լրիվության սկզբունքից. եթե անհրաժեշտություն չկա, որ այդ ինֆորմացիան իմանա պաշտպանյալը, ապա պետք չէ այն հայտնել նաև պաշտպանին, քանի որ նրանք մի ամբողջություն են⁸:

Նախագիծն այս հարցում որդեգրել է պաշտպանության լրիվության սկզբունքը, քանի որ դրա 188 հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ նախաքննության տվյալների հրապարակման սահմանված արգելքները չեն տարածվում փաստաբանի և նրա վստահորդի միջև տեղեկությունների փոխանակման վրա: Նման մոտեցումն արդարացված է այն պարզ պատճառով, որ պաշտպանի և պաշտպանյալի տեսակցությունները տեղի են ունենում խորհրդապահական (կոնֆիդենցիալ) կարգով: Հետևաբար, բոլոր դեպքերում հնարավոր չէ կանխել կամ վերահսկել այս կամ այն տեղեկության փոխան-

⁵ St' u Jaspers v. Belgium գործով 15/10/80թ. վճիռը

⁶ St' u Kremzow v. Austria գործով 21/09/93թ. վճիռը

⁷ St' u Fellman D. The Defendant's Rights. New York, 1958, էջ 123:

⁸ St' u Trammel v US (Supreme Court of US, 1980). Park R.C. Waltz J.R. Cases and materials on evidence. Westbury, New York, 1995, էջ 521.

ցումը: Բացի այդ, գործնականում չի բացառվում, որ նույն տեղեկությունները պաշտպանը ձեռք բերի օրենքով չարգելված այլ եղանակով և հետագայում դրանք օգտագործի պաշտպանության իրականացման ընթացքում: Ուստի, կարծում ենք, որ եթե արդարադատության շահից ելնելով անհրաժեշտ է մինչև նախաքննության ավարտը պաշտպանության կողմից գաղտնի պահել որոշակի փաստական տվյալներ, ապա դրանք չպետք է հաղորդվեն ոչ մեղադրյալին, ոչ էլ պաշտպանին:

Նախագծի 29 հոդվածի 1-ին մասում ամրագրված պարտականությունը պաշտպանի գործունեություն մեջ յուրահատուկ դրսևորումներ է ստանում այն ժամանակ, երբ ներանձնային հակասություններ են առաջանում պաշտպանի ներքին համոզմունքի ու մասնագիտական պարտքի միջև, ինչպես նաև, երբ առկա են միջդերային հակասություններ արդարադատության և պաշտպանյալի շահերի միջև:

Վերոնշյալ հակասությունները հատկապես սրվում են փաստաբանական գաղտնիքի պահպանման անհրաժեշտության դեպքում: Օրենսդրական ընդհանուր կարգավորումների համաձայն՝ փաստաբանական գաղտնիքը պաշտպանված է պարտադրված հրապարակումից, իսկ գործող քրեական դատավարության օրենսգրքով արգելվում է փաստաբանից պահանջել իրավաբանական օգնության տրամադրման ժամանակ նրան հայտնի դարձած տեղեկությունները:

Սակայն գործնականում ամեն ինչ շատ ավելի բարդ է, քան թվում է: Օրինակ՝ դատավարական ոչ պատշաճ, մակերեսային ստուգման արդյունքում չի բացահայտվել գործի լուծման համար նշանակություն ունեցող ինչ-որ փաստաթղթի կեղծ լինելու հանգամանքը, ինչի մասին պաշտպանը քաջատեղյակ է: Այդ փաստն ըստ էության փաստաբանական գաղտնիքի առարկա է, որը պահպանվում է և՛ օրենքով, և՛ փաստաբանական էթիկայի նորմերով: Միաժամանակ այդ փաստաթղթի օգտագործումը ձևականորեն չի խախտում պաշտպանությունն օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու պահանջը, քանի որ փաստաթղթի իսկությունը հաստատվել է դատավարական ստուգմամբ, որը չի իրականացրել պաշտպանը:

Մյուս կողմից գոյություն ունեն բարեխղճության, օբյեկտիվության և ազնվության պահանջներ, որոնք տեղավորվում են Նախագծի 29 հոդվածով նախատեսված սկզբունքի բովանդակության մեջ: Սակայն եթե պաշտպանը հետևի դրանց, ապա խախտած կլինի իր մասնագիտական պարտքի և փաստաբանական էթիկայի նորմերը: Հակառակ դեպքում նրա վարքը հակասության մեջ է մտնում բարոյականության ընդհանուր պահանջների հետ:

Այս կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ տարբեր մոտեցումներ կան: Օրինակ՝ Ա. Նագարովը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանն ընտրություն պետք է կատարի մասնագիտական պարտքի և բարոյականության արժեքների միջև, նա պարտավոր է դիմել վարույթն իրականացնող մարմնին, որպեսզի վերջինս իրեն հեռացնի վարույթից⁹: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ պաշտպանը դատախազի և դատարանի հետ մեկտեղ հանդիսանալով արդարադատության քուրմ, իրավունք չունի դատարանից թաքցնելու պաշտպանյալի՝ հանցանք կատարած լինելու փաստը, եթե ինքն այդ մասին տեղեկանում է պաշտպանյալից կամ հանգում է այդ հանգաման գործի նյութերն ուսումնասիրելիս, անգամ եթե պաշտպանյալը հերքում է այդ փաստը¹⁰: Այս տեսակետը հիմնավորվում է նրանով, որ այս պարագայում անօրինական են ոչ միայն պաշտպանյալի շահերը, այլև պաշտպանության միջոցներն ու մեթոդ-

⁹ Տե՛ս Назоров А. Запретный плод сладок // Новая адвокатская газета. Ё 17, 2009, էջ 19:

¹⁰ Տե՛ս Адвокат в уголовном процессе, под ред. П.А. Лупинскоу. Москва, 1997, էջ 32:

ները, իսկ պաշտպանն էլ ոչ մի իրավունք չունի իր ներքին համոզմանը հակառակ գործարքի մեջ մտնել իր խղճի հետ և խաբել դատարանին ու արդարադատությունը¹¹: Նման պայմաններում գործող պաշտպանը նմանեցվում է այն բժշկին, ով բուժման ընթացքում առաջնորդվում է ոչ թե իր գիտելիքներով, այլ հիվանդի խորհուրդներով¹²: Միաժամանակ այս տեսակետի համախոհներն ավելի քան համոզված են, որ հակառակ դեպքում պաշտպանը կխախտի բարեխղճության սկզբունքը:

Ներկայացված կարծիքների հետ միանշանակ համաձայնվել հնարավոր չէ գոնե այն պատճառով, որ անմեղության կանխավարկածը պաշտպանին թելադրում է առաջնորդվել «պաշտպանն իր պաշտպանյալի դատավորը չէ» կարգախոսով¹³: Համաձայն ենք, որ պաշտպանի առկայությունն արդարադատության անփոխարինելի գրավականներից է, բայց չնոռանանք, որ պաշտպանն աջակցում է արդարադատությանը միակողմանիորեն՝ ոչ թե օբյեկտիվ իրականության բացահայտման, այլ վստահորդի պաշտպանության կոնտեքստում. «պաշտպանը «պարտիզան» փաստաբան է, այլ ոչ թե փաստերն անկողմնակալ վեր հանող»¹⁴:

Փաստաբանական մասնագիտության մեծագույն բարդություններից մեկը օբյեկտիվությունը, միակողմանիությունը, բարեխղճությունն ու սեփական համոզմունքը և պաշտպանյալի շահերը համատեղելու մեջ է (պատկերավոր ասած՝ օբյեկտիվը սուբյեկտիվի մեջ ներկայացնելու կարողություն), բայց պաշտպանությունը պաշտպանի սեփական պատկերացումներից կախվածության մեջ դնելը կնշանակեր օրենքով սահմանված պաշտպանության երաշխիքների գոհաբերում պաշտպանի սուբյեկտիվ կարծիքին:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե արդյոք Նախագծի 29 հոդվածի 1-ին մասով նախատեսված «բարեխղճորեն» եզրույթի ներքո տեղավորվում են այն իրավիճակները, երբ պաշտպանը պաշտպանությունը կառուցում է վարույթն իրականացնող մարմնի սխալների վրա: Այս հարցի շուրջ գրականության մեջ կա երկու իրարամերձ մոտեցում. դատավարագետ Մ. Ս. Ստրոգովիչի համոզմամբ պաշտպանին թույլատրվում է մասնակցել մինչդատական վարույթին հենց այն բանի համար, որ որոշակի սխալներ հայտնաբերելիս տեղյակ պահի քննիչին՝ նրան ընծեռելով դրանք ուղղելու հնարավորություն¹⁵: Այս տեսակետի հակառակորդները պարզապես մշում են. «Եթե պաշտպանը հայտնաբերել է դատավարական սխալներ, անհրաժեշտություն չկա անմիջապես միջնորդություն ներկայացնել դրանք վերացնելու համար, քանի որ դրանք քննիչի սխալներն են, և նա օբյեկտիվ հնարավորություն ուներ դրանք չանելու»¹⁶:

Քննարկվող խնդրի առնչությամբ եվրոպական դատավարագետները գտնում են, որ եթե հակառակորդ կողմի թույլ տված սխալներն այդքան էլ էական չեն և չեն ազդում գործի ելքի վրա, ապա պարզապես չարժե դրանք բարձրաձայնել և ավելորդ խախտել էթիկայի պահանջները: Պաշտպանը դատավորի աչքում կշահի միայն այն դեպքում, եթե համբերատար գտնվի իր վստահորդի համար նվազ վտանգ ներկայացնող սխալներ

¹¹ Տե՛ս, օրինակ, Назаров А., Соколов Т. Повышать авторитет советской адвокатуры // Советская юстиция N7, 1959, էջ 18. Горский Г. Ф., Котов Д. П. Судебная этика. Воронеж, 1973, էջ 171.

¹² Տե՛ս էտիկա предварительного следствия, ред. колл. Гаврилов А. К., Астушенко В. Г. и др. Волгоград, 1976, էջ 120:

¹³ Տե՛ս, օրինակ, Леоненко В. В. Профессиональная этика участников уголовного судопроизводства. Киев, 1981, էջ 109, Кобликов А. С. Юридическая этика. Москва, 1999, էջ 129:

¹⁴ Տե՛ս Geoffrey C, Hazard JR., Susan P., K., Roger C.C. The law and ethics of lawyering, New York, 1994, էջ 447:

¹⁵ Տե՛ս Строгович М. С. Проблемы судебной этики. Москва, 1974, էջ 249:

¹⁶ Տե՛ս Чашин А. Н. Стратегия и тактика адвокатской деятельности. Москва, 2008, էջ 188:

րի և բացթողումների նկատմամբ¹⁷: Իսկ ԱՄՆ գերագույն դատարանն իր մեկնաբանություններում պարզապես նշել է, որ անձը չպետք է դատապարտվի ոստիկանության աշխատակիցների կոպիտ և չմտածված սխալների հիման վրա¹⁸:

Մեր դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ մի փոքր այլ է: Չենք կարծում, որ որևէ խնդիրներ կառաջանան, եթե պաշտպանը լինի առավել զգոն և այդ հնարավորությունները չօգտագործի վարույթն իրականացնող մարմնին վարկաբեկելու կամ քննության համար արհեստական խոչընդոտներ ստեղծելու նպատակով: Ինչպես նշում է Պ. Սերգեյչը, պետք է սովորել չանել այնպիսի սխալներ, որոնցից հնարավոր է խուսափել¹⁹: Ուստի, ելքը տարբերակված մոտեցման մեջ է: Եթե սխալների հետևանքով խախտվել են պաշտպանյալի իրավունքները կամ իրավաչափ շահերը (օրինակ՝ ձերբակալված անձին արգելանքի տակ են պահել 72 ժամից ավելի), ապա անհմաստ է այդպիսի սխալները պահել մինչև դատական վարույթ, հատկապես եթե դրանց ներկայացումը դատարանին պաշտպանության կողմին տակտիկական որևէ առավելություն չի տալու: Սակայն եթե թույլ տրված սխալների հետագա վիճարկումը դատարանում կարող է փոխել ապացույցների հարաբերակցությունը (օրինակ՝ օրենքի խախտումով կատարված քննչական գործողության արձանագրության թույլատրելիությունը վիճարկելը), ապա նման մոտեցումը՝ որպես տակտիկական հնարքի կիրառում, մեր խորին համոզմամբ, ամբողջապես տեղավորվում է բարեխղճություն եզրույթի մեջ:

Անվիճելի է, որ պաշտպանի կողմից պաշտպանությունը սուտ կամ կեղծված ապացույցների վրա կառուցելը որևէ արդարացում ունենալ չի կարող: Սակայն այլ իրադրություն է, երբ պաշտպանն ուղղակի կասկածում է ներկայացվող ապացույցների սուտ կամ ոչ հավաստի լինելու մեջ: Թեև այս հարցը մասնագիտական տարբեր քննարկումների առարկա է եղել, սակայն դրա շուրջ միասնական մոտեցում այդպես էլ չի ձևավորվել:

Այսպես, Ն. Պ. Կանի կարծիքով, «եթե պաշտպանը պաշտպանությունն իրականացնելիս հիմնվի կասկածելի փաստարկների և ապացույցների վրա, ապա անմիջապես կվերածվի արդարադատության դեմ պայքարողի, ինչն անհարիր է նրա կոչմանը»²⁰: Հակառակ դիրքորոշումն ունի Ն. Ն. Պոլյանսկին. «Պաշտպանը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է կասկածելի փաստարկներ ներկայացնել. դա բխում է նրա առաքելությունից»²¹: Հատկանշական է, որ այս հարցին միանշանակ պատասխան չի տալիս նաև արտասահմանյան երկրների փորձը: Այսպես, Եվրոպական ընկերակցության երկրների փաստաբանների կանոնների ընդհանուր կանոնագրքի 4.4 հոդվածի համաձայն՝ «պաշտպանը իրավունք չունի դատարանին հայտնել ոչ հավաստի և կասկածելի կամ սուտ տեղեկություններ»: Իսկ ամերիկյան փաստաբանների մասնագիտական էթիկայի տիպային կանոնների 3.3 կանոնի համաձայն՝ «պաշտպանը դատարանին

¹⁷ St´u Roger J., Vanberg G. Resurrecting Lochner of unprincipled judicial activism // The journal of law, economics and organization, " 2, 2007, էջ 7:

¹⁸ St´u Mayers L. The American legal system. New York, London, 1964, էջ 42-43, Фаўрстоун Т. Сравнительный анализ США и РФ по недопустимости показаний подозреваемого/ обвиняемого, полученных с нарушением закона // Адвокатская палата, N 2, 2009, էջ 8:

¹⁹ St´u Сергеич П. Искусство речи на суде. Тула, 1999, էջ 9:

²⁰ St´u Кан Н. П. Некоторые вопросы адвокатской этики // Вопросы защиты по уголовным делам: Убջբերումն ըստ Строгович М. С. նշված աշխատությունը, էջ 263:

²¹ St´u Полянский Н. Н. Правда и ложь в уголовной защите. Москва, 1927, էջ 47, համակարծիք են նաև Баев М.О. Этичность как критерий допустимости тактических средств профессиональной защиты // Воронежский адвокат N5, 2004, էջ 6, Воробьев А.В. Можно ли доверять адвокату // Вопросы адвокатуры N 35, 2004, էջ 8, Боуков А.Д. Основы профессиональной этики адвоката. Москва, 2007, էջ 27:

չպետք է ներկայացնի այնպիսի ապացույցներ, որոնց կեղծված լինելու մասին ինքը հաստատապես գիտի»: Այս կանոնագրքում, ի տարբերություն նախորդի, կասկածելի ապացույցների մասին ոչինչ չի ասվում:

Այս հարցի վերաբերյալ մեր դիրքորոշումը հետևյալն է. պաշտպանը քրեական վարույթին մասնակցում է իր պաշտպանյալի օգտին խոսող բոլոր ապացույցները վեր հանելու համար, իսկ այն ապացույցները, որոնց ճշմարիտ լինելը կասկած է հարուցում, բնականաբար կարող են հավասարապես և՛ ճիշտ լինել, և՛ սուտ: Խնդիրը հենց այն է, որ, ի տարբերություն դատավարությանը մասնակցող պետական մարմինների, պաշտպանը հնարավորություն չունի իր վարկածների ճիշտ կամ սխալ լինելը ստուգելու, քանի դեռ ՀՀ օրենսդրությունը նրան քննություն կատարելու հնարավորություն չի ընձեռել: Ի վերջո, պաշտպանին կասկածելի ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից զրկելը ինքնին սահմանափակում է անմեղության կանխավարկածի կարևորագույն բաղադրիչներից մեկի կիրառումը՝ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Ուստի, միանգամայն արդարացված և թույլատրելի է, որ մեղադրյալի պաշտպանությունը կառուցվի նաև կասկած հարուցող փաստարկների ու ապացույցների վրա:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Նախագծի 29 հոդվածի 1-ին մասի իմաստով «բարեխղճորեն» եզրույթը վերացարկվում է քրեական վարույթի մյուս մասնակիցների համար ունեցած իր նշանակությունից, ու պաշտպանի համար այն լիովին նոր կադապրներ է ստանում՝ հարմարվելով նրա գործունեության բոլոր առանձնահատկություններին:

PROHIBITION OF ILLICIT CONDUCT IN THE CONTEXT OF ADVOCATE ETHICS

Hrayr Ghukasyan

Associate professor of the Criminal Procedure and Criminalistics Chair

Head of the working group on the Draft Criminal Procedure Code

Anahit Harutyunyan

PhD student of the Criminal Procedure and Criminalistics Chair

The principal aim of the Draft Code of Criminal Procedure of the RA is to define effective procedure for conducting proceedings concerning alleged crimes, which is based on safeguarding human rights and freedoms. Regarding to this the Article 29th of the Draft Code (Prohibition of Illicit Conduct) is too valuable and vital, especially when its stipulation in domestic criminal procedure is a novelty.

The main value of the Article 29th of the Draft Code is that for the first time it clearly expresses the balance of the protection of public and private interests, as well as in its context is highlighted the possibility of restriction of the procedural rights for some individuals in the interest of justice.

The main feature of the 29th Article of the Draft Code is that while its implementation during advocate activity it is able to receive other forms and shapes which are fully effused from the peculiarity of the advocate ethics.

ЗАПРЕЩЕНИЕ НЕПРАВОМЕРНОГО ПОВЕДЕНИЯ В КОНТЕКСТЕ АДВОКАТСКОЙ ЭТИКИ

Грайр Гукасян

*Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,
руководитель рабочей группы по разработке проекта
нового уголовно-процессуального кодекса РА*

Анаит Арутюнян

Аспирант кафедры уголовного процесса и криминалистики

Проект нового уголовно-процессуального кодекса РА предусматривает основополагающую норму, обеспечивающую эффективный порядок процесса, нашедшую отражение в статье 29 (запрещение неправомерного поведения). В отечественном уголовном процессе закрепление такой обязанности является новизной. В этом принципе четко отражена воля обеспечить сбалансированную защиту общественных и частных интересов. Так же в ней впервые закреплена возможность ограничения процессуальных прав отдельных лиц во благо правосудия.

Особенностью части 1-ой статьи 29-ой является то, что в контексте адвокатской этики она абстрагируется от своего значения, которое предусмотрено для остальных участников уголовного процесса, полностью адаптируясь ко всем особенностям адвокатской деятельности и адвокатской этики.

Բանալի բառեր – բարեխիղճ, սկզբունք, քրեական պաշտպանություն, ոչ իրավաչափ, մասնագիտական պարտք, հակասություն, հարաբերակցվել, փաստաբանական էթիկա, արդարադատություն, շահ

Keywords: good faith, principle, criminal defense, illicit, professional duty, contradiction, correlation, advocate ethics, justice, interest

Ключевые слова: добросовестный, принцип, уголовная защита, неправомерный, профессиональный долг, противоречие, корреляция, этика адвоката, правосудие, интерес